

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

..... 2015 թվականի N-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի
N 168-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝
Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի
«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման N 1 հավելվածով
հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 23-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունում ««բ» և «գ» պարբերություններով»
բառերը փոխարինել ««բ», «գ» և «դ» պարբերություններով» բառերով:

2) 44-րդ կետի 4-րդ ենթակետը լրացնել «կամ հայտի ապահովումները» բառերով:

3) 45-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«45. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման
արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի
պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային
առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը
ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ
աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա
մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման
ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: »:

4) 50-րդ կետը «անշարժ գույքը» բառերից հետո լրացնել «կամ ավիասպասարկման
ծառայությունները, կամ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 25-րդ
կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերության հիման վրա» բառերով:

5) 65-րդ կետի 2-րդ ենթակետը «անշարժ գույքը» բառերից հետո լրացնել «կամ
ավիասպասարկման ծառայությունները, ինչպես նաև եթե գնման ընթացակարգը
կազմակերպվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերության հիման վրա»
բառերով:

6) 67-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ ավիասպասարկման ծառայությունները, կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ինչպես նաև եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերության հիման վրա, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1.	Անհրաժեշտությունը
	Սույն որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 30.01.15թ. թիվ 105-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) գործնական կիրառման ժամանակ առաջացած որոշ խնդիրների կարգավորման անհրաժեշտությամբ:
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	<p>ՀՀ կառավարության 30.01.15թ. թիվ 105-Ն որոշմամբ փոփոխության է ենթարկվել ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգը, որի գործնական կիրառման ժամանակ արձանագրվել են որոշ խնդիրներ: Մասնավորապես.</p> <p>1. Կարգի համաձայն՝ մասնակցի՝ հայտով ներկայացրած փաստաթղթերում, բացի գնային առաջարկներից, եթե առկա են հրավերի պահանջներին անհամապատասխանություններ, ապա բացման նիստը կասեցվում է՝ մասնակցին հնարավորություն տալով 1 օրյա ժամկետում շտկել թերությունները: Եթե մասնակիցը չի շտկում այդ թերությունները, վերջինիս հայտը մերժվում է և այդ մասնակցից գանձվում է հայտի ապահովումը՝ տուժանքը:</p> <p>Սակայն կարգավորված չէ այն դեպքը, երբ մասնակիցը հայտով չի ներկայացնում հայտի ապահովումը կամ ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին և վերջինս, հնարավոր հակամրցակցային համաձայնության գալով այլ մասնակիցների հետ, հրաժարվում է շտկել այդ թերությունը: Արդյունքում նշված մասնակցի հայտը մերժվում է, սակայն հնարավոր չէ վերջինից գանձել հայտի ապահովումը՝ տուժանքը:</p> <p>Նախագծով նախատեսվում է, որ հայտի ապահովումը չներկայացնելու կամ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացվելու դեպքում տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ առանց այդ թերությունը շտկելու հնարավորության:</p> <p>2. Ավիասպասարկման ծառայությունների և Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի <<զ>> պարբերության հիման վրա կատարվող գնումների դեպքում, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա <<մասնագիտական փորձառություն>> չափանիշին բավարարելու նպատակով մասնակիցները ներկայացնում են նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, իսկ <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է պատմիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված հարցման միջոցով:</p> <p>Սակայն հաշվի առնելով, որ վերոհիշյալ գնումները գումարային տեսակետից փոքր ծավալ են կազմում, աննպատակահարմար է գնահատել հիշյալ չափանիշները, ինչը նախատեսվել է նախագծով:</p>
	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության փոփոխություն չի նապատեսվում:
4.	Կարգավորման նպատակը և բնույթը
	Որոշման նախագծի նպատակն է կարգավորել գնումների գործընթացում առկա որոշ խնդիրներ:
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Որոշման նախագիծը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության կողմից:
6.	Ակնկալվող արդյունքը

	Որոշման նախագծի ընդունմամբ կկարգավորվի գնումների գործընթացում արձանագրված որոշ խնդիրներ:
7.	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ՝ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՑԱՆԿ

այն իրավական ակտերի, որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով մշակվել է <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը

- <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք,
- <<Գնումների մասին>> ՀՀ օրենք,